ՆՈՐ-ԴԱՐ

№ 193 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Կիրակի, 16 Դեկտեմբերի 1901 Կիրակի. 16 Դեկտեմբերի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 193

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1902-ին կը հրատարակուի Թիֆլիսում նոյն ծրագրով և ուղղութեամբ ամեն օր, բացի տօներին հետեւող օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, երեք ամսուանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

Յայտարարութիւններ ընդունւում են և՛ օտար լեզուներով բառը 2 կ., առաջին երեսումը՝ 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է Դաւիդովսկայա փողոց, տ. № 5.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն Тифлисъ въ Редакцію „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase), Rédaction du journal «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Նպատակայարմար խորհրդածութիւններ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Թաւրիզից։ Թիֆլիսի վանքի աւագ եկեղեցու վերանորոգութիւնը։
Վենետիկը և Էջմիածինը։
Թղթակցութիւններ.—Նոր Նախիջեւանից։
Կարնոյ երկրաշարժը։
Նամակ խմբագրութեան։
Քաղաքական.—Անգլիա։ Հարաւային Աֆրիկա։
Հեռագրական լուրեր։
Ֆէլիէտոն.—Գաղտնի կղզի։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 15 դեկտեմբերի 1901 թ.

ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ

Նպատակը միջոցի հետ շփոթելով, անպայման և անհաշիւ մտրակող և մերկացնող ուղղութեամբ մենք մեր նպատակին չհասանք, որքան էլ որ մենք իրաւունք ունենայինք պարծենալու, թէ մենք եղելութիւնը, ճշմարտութիւնն ենք միայն արձանագրել և դրութիւնը բարեփոխելու նպատակով ենք գործել։

Ինչքան էլ որ անկեղծ լինի մեր միտքը, ինչքան էլ որ բարենպատակ՝ մեր գործողութիւնը, եթէ դրանք վնասում են մեզ, մեր զարգացման գործին, մեր ազգին, հօ պէտք է խոստովանենք, հօ իրաւունք չունինք իրողութիւնը թաքցնելու։

Մենք մեր դրամատուրգների, մեր վիպասանների, մեր գրողների գրուածքները, մտաւոր և հոգեկան աշխատութիւններն այստեղ քննադատելու միտք չունինք. բայց դրանցից նրանք, որոնք մերկացման, մտրակող ուղղութեան սիրահար են և այդ ուղղութեամբ են գործել, այդպիսիները հայութեան մէջ յայտնուող պակասութիւններն անխնայ հրապարակ հանելով ամենևին գործին չեն ծառայել և, բացի այդ, ճշմարտութիւնից հեռու են մնացել։

Այսպէս՝ Սունդուկեանը բեմ հանելով հայ վաճառականի պակասաւոր և ազնիւ կողմերը՝ հայ վաճառականի մի տիպ է ստեղծել, որով օտարը, ինչպէս՝ օրինակ՝ վրացին, հայի բնաւորութիւնը և արժանիքն է որոշում. և իւրաքանչիւր վրացի դրամատուրգ իւր պիէսների մէջ եթէ մի որև է անճոռնի, ստոր տիպ է ուզում հրապարակ հանել, այդպիսին անպատճառ հայ է լինում։ Միթէ հայ վաճառականն իբրև հայ չունէր իւր լաւ, ընտիր կողմերը... միթէ հայ վաճառականը խօսքի տէր, իւր ամօթին, նամուսին գերի, ընտանիքի պատուական ամուսին, իւր զաւակների անձնուէր, առաքինի հայր չէ եղած. այո, եղել է այնպիսի մի դրութիւն, որ առաջ է բերել հայ վաճառականի շատ համակրելի տիպ, որի մասին օտարները գաղափար անգամ չունին, բայց Սունդուկեանցը, ինչպէս և ուրիշներն այդ տիպերը բաց են թողել, որովհետև միմիայն պակասաւոր կողմերն են որոնել հայութեան մէջ։

Անցեալի մասին քննադատութիւնը թողնելով, մենք կրկնենք մեր նախորդ առաջնորդողի վերջին տողերը. Ուրեմն ի՞նչ անենք, ինչպէս գործենք և ո՞ր ճանապարհով գնանք ցանկալի նպատակին հասնելու համար։

Երբ զօրաւոր, բնաւորութեամբ ուժեղ և խելքով կարող մարդու պակասութիւնն երեսովն ես տալիս, նա հանգիստ լսում է և իսկոյն նկատում է, որ ճշմարտութիւնն ես ասում, և կատարում է նրա մէջ ցանկալի փոփոխութիւն. Նա զգուշանում է իւր սխալներից, նա աշխատում է ուղղել իւր սխալները։

Բայց երբ բնաւորութեամբ թոյլ և խելքով ոչ այնքան կարող մարդուն նախատում ես և իւր պակասութիւններն երեսովն ես տալիս, նա վրդովւում է, նա զայրանում է ու չէ ընդունում, որ ասածդ ճշմարտութիւն է, և անմիտ ինքնասիրութիւնից, մտքի տկարութիւնից, բնաւորութեան թուլութիւնից կամ յամառում է և կամ յուսահատւում. վերջին դէպքում նա ինքն իրեն ասում է, որ՝ այդպէս է, էհ, ես էլ հօ փոխուելու չեմ, իմ բանը վերջացած է։

Ի՞նչ որ անհատների համար ենք ասում, նոյնը կարելի է վերաբերել և ազգերին։

Անզարգացած, ուրոյն պայմանների մէջ գտնուող, մտքով և զարգացումով տկար մի ժողովրդի վերաբերութեամբ, ինչպիսին հայոց ժողովուրդն է, անպայման, անհաշիւ և անգութ բերանով մտրակող, մերկացնող սիստեմը միմիայն վնասել և յուսահատութեան հասցնել կարող է։

Որ վատ ենք, որ ստոր ենք, որ անպէտք ենք, էլ ինչո՞ւ կանք, էլ ինչացո՞ւ ենք. ամենքն էլ ասում են, որ վատ ենք...

Չենք կարծում, որ փողոցի, ծախու, ապականուած աղջկան կարելի լինի ուղղել նրան նախատելով, նրան հայհոյելով, նրա պակասութիւններն երեսին տալով կոպտաբար։

Ընդհակառակը կարծում ենք, որ ապականուած աղջկայ վրայ բարերար, փրկող և հոգին մաքրող ներգործութիւն կունենայ առաքինի, ազնիւ, մաքրաբարոյ կնոջ օրինակը, պատկերը։

Սրանով ուզում ենք ասել, որ փոքրիկ, ընկած ազգերին նախատելուց, յուսահատեցնելուց աւելի՝ քաջալերել և այդպիսով զօրացնել է հարկաւոր։

Ամենամեծ ծառայութիւնն արել է հայոց գրականութեանը և միևնոյն ժամանակ ամենագեղեցիկ օրինակը տուել է մեզ Խաչատուր Աբովեանը իւր «Վէրք Հայաստանի» վէպով։

ՖԷԼԻԷՏՕՆ

ԳԱՂՏՆԻ ԿՂԶԻ *)

(Դէպի անասունների աշխարհը կատարած իմ ակամայ ուղեւորութեան յիշողութիւններից)

Յարգելի ընթերցող, երկու տարի լետարգիական քուն մտնելուց յետոյ, ահա զարթնել եմ վերջապէս և ուզում եմ նորից մասնակից անել ձեզ այն յիշողութիւններին, որոնք կուտակուել են գլխումս Գաղտնի կղզում տեսածներիցս ու զգացածներիցս։

Այս յառաջաբանից յետոյ դառնանք ուղղակի մեր նիւթին։

Մի առաւօտ վեր կացայ, տեսնեմ Աղուէս բարեկամս անկողնում պառկած դողդողում է։ Սաստիկ վախեցած, հարցրի.

—Ի՞նչ է պատահել, հոգի՛ս։

—Մր...մր...սս...սել եմ, — հազիւ հազ պատասխանեց Աղուէսը։

Օ՜, հանճարեղ բարեկամս, դու հիւանդանում ես... Քիչ էր մնացել, լաց լինէի։

Այդ ժամանակ ներս մտաւ պառաւ աղախինը, որ մի բարի Աղուէսուհի էր։

Իմանալով բանն ինչումն է, ինձ հանգստացրեց և ասաց.

—Ինչ անենք թէ մրսել է, թէյ կըխմեցնենք, կըքրտնի և մի օրից յետոյ կըլաւանայ։

—Է՜, գնա կորիր,—բղաւեցի ես,—կարծում ես, երևի, քաղաքացու մարմնի կազմուածքը նոյնն է, ինչ որ գիւղացունը։ Չէ՜։ Ես այս րոպէիս կըգնամ բժշկի ետևից։

Ու, դուրս վազելով, կառք վարձեցի և ուղղակի քշել տուեցի բժշկապետ Գայլի մօտ։ Բացատրելով բանն ինչումն է, առայ նրան հետս և եկանք բարեկամիս մօտ։ Բարեկամս դադարել էր դողդողալուց և այժմս տաքութեան մէջ էր։ Ճակատը, ականջներն ու պոչը կարմրել էին և կրակի պէս տաք էին։ Բժիշկը բաց արեց հիւանդի շապիկը, չըխկացրեց, թըխկացրեց, պոչից բռնեց զարկը համրեց և, նստելով սեղանի մօտ, գրեց մի դեղատոմս։

—Մրսողութիւնը պոչից է սկսուել,—բացատրեց յարգելի բժշկապետը,—և անցնելով թաթերը՝ դէմ է ընկել այդտեղ։ Բայց վնաս չունի. այս դեղերը գործածելուց յետոյ կըսկսի առողջանալ և մի երկու օրից յետոյ ոտի կըկանգնի։

Խորին շնորհակալութիւնս յայտնեցի պ. բժշկապետի այդ յուսադրական խօսքերի համար և ձեռք տալու միջոցին մի երեք րուբլի թաթը դրի։

—Ի՞՜նչ, բացականչեց պ. Գայլը,—երե՞ք րուբլի միայն... Դուք երևի միշտ դալլաքների հետ էք գործ ունեցել։ Խնդրեմ յետ վերցնէք։

Եւ բժշկապետն, արդար բարկութեամբ վառուած, քիչ մնաց փողերն երեսիս շպրտէր։

—Ներողութիւն, պ. բժշկապետ...Ո՞րքան կըհրամայէք ձեզ տալու,—համարձակուեցի կմկմալ ես։

—Հինգ րուբլուց պակաս չեմ վերցնում,—պատասխանեց պ. Գայլը։

Տուեցի հինգ րուբլի, և բժշկապետն արագ դուրս գնաց տնից։ Ես էլ շուտով դուրս վազեցի և գնացի դեղատուն դեղերը պատրաստել տալու։ Մի կէս ժամից յետոյ, ուրախ-ուրախ, դեղերը կըռանս տակին, վազեցի բարեկամիս մօտ։

—Դէ՜, շուտով ոտի կըկանգնես,—ասացի դասաւորելով սեղանի վրայ մօտ տասը սրուակ։

Ամենայն ճշտապահութեամբ սկսեցի բարեկամիս բժշկութիւնը։

Բայց ժամ ժամի վրայ, քանի գնում վատանում էր նրա դրութիւնը։ Երեկոյեան բարեկամս կատարելապէս գժուել էր։ Տակից գլխից դուրս էր տալիս և երևակայում էր իրեն բանաստեղծ։ Այդ արդէն բոլորովին վատ նշան էր։ Ես յուսահատուած նստած լաց էի լինում։ «Միթէ,—մտածում էի,—իմ ամեն մի լաւ ընկերս այդ ձևով պիտի փոխադրուի հանդերձեալ աշխարհը» Բացատրելու համար իմ այս երկիւղը, պիտի պատմեմ ձեզ հետևեալ սրտաշարժ օրինակը, ճիշտն ասած՝ եղելութիւնը։

Երբ դեռ բաղդն ինձ չէր գցել Գաղտնի կղզին, իմ մի լաւ ծանօթս, մի օր փողոցով անցնելիս, մի հարուած է ստանում գլխին լուացքի ամանով։ Մի աղախին կամեցել է ամանի կեղտաջուրը փողոց թափել, ինչպէս շատ տեղեր ընդունուած է, և, սխալուելով, երևի ուշքը եղել է հարևան լակէյի բեխերի վրայ, ամանն էլ հետն է շպրտել։ Այդ օրուանից խեղճ բարեկամիս խելքն ըսկսում է տատանուել. դա երևում էր այն բանից, որ մինչև այդ օր խաղաղ ու համեստ Մարկոսը (այդպէս էր բարեկամիս անունը) յանկարծ սկսեց բանաստեղծութիւններ գրել և ինչպէս բոլոր սկսնակներն ու ոչնչութիւնները կատաղի կերպով հայհոյում էր բոլոր մեծ և անուն ստացած բանաստեղծներին։ Կամաց-կամաց նա սկսեց յուսահատուել, տեսնելով որ չի կարողանում մեզ մի բան հասկացնել, որովհետև երբ կարդում էր իւր հանճարեղ գրուածքները, փոխանակ գովասանքների, հոմերական ծիծաղի էր արժանանում։ Նա բարկանում էր և վերջ ի վերջոյ վճռեց որ շատ շուտ է ծնուել, գոնէ մի 1500 տարուց յետոյ պիտի աշխարհ գար, որպէս զի ապերախտ մարդկութիւնը հասկանար իրեն, ուստի և վճռեց, առանց դէս ու դէնի, տունը ձգել, որը և կատարեց զովելի արագութեամբ։ Առաւօտեան պառկեց և մինչև կէս օր հոգին աւանդեց։ Նա զզւում էր մարդկանց մեռնելու սովորական եղանակիցն էլ։ Դա հասարակ է, ծամծմած է, մէջը չկայ ոչ մի բանաստեղծութիւն,—ասում էր նա.—այ, ի՜նչ բան կըլինէր, եթէ կարելի լինէր բարձրանալ լուսնի գլուխը և այնտեղից նետուելով մի ազատամտի գլխի վրայ ջախջախուել։

Ահա այդ էր պատճառը, որ Աղուէսբարեկամիս բանաստեղծութիւններ չարադրելն ինձ յուսահատութեան մէջ ձգեց։ Տեսնեմ, որ նստելով բան չեմ շինիլ, վճռեցի բերել մի ուրիշ բժիշկ։ Մի կէս ժամ չանցած բժշկապետ պ. Վագրի հետ Աղուէսիս անկողնու մօտ էի։ Երբ ներս մտաւ պ. Վագրը և տեսաւ դեղերի սրուակները, սաստիկ զայրացաւ։

—Այստեղ երևի արդէն ուրիշ բժիշկ է եկել, հա՞,—հարցրեց նա։

—Այո, — պատասխանեցի ես, —պ. Գայլն էր։

—Գայլը՞... հըմ... միթէ նա բժիշկ է,—փրփուրը բերանին սկսեց պ. Վագրը.—Դա խաբեբայ է, կլանող է, անամօթ է։ Ամեն մի ապուշ վեր է կենում տեղից և իրեն բժիշկ հռչակում։ Այդպիսիները գողեր են և ոչ թէ բժիշկ։ Փայտով պիտի վռնդել դրանց քաղաքներից։

—Ներողութիւն, պ. բժշկապետ, հիւանդը շատ է նեղանում,—դիտմամբ ընդհատեցի, որ նա ուշադրութիւն դարձնի հիւանդի վրայ

Պ. Վագրը նոյնպէս սկսեց չըխկացնել, թըխկացնել, ականջ դնել և, դառնալով ինձ, հարցրեց։

—Հը՜, ինչ է ասել այդ յիմար Գայլը, ինչպէ՞ս է նա հասկացել հիւանդութիւնը։

—Նա ասաց թէ հիւանդութիւնն սկսել է պոչից և դէմ է ընկել թաթերում։

—Տեսնո՞ւք որ յիմար է.—բացականչեց պ. Վագրը.—այդ հիւանդութեան մէջ

---

*) Տես «Նոր-Դար» № 27, 1900 թ.

Եթէ գոյութիւն չէ ունեցել Աղասին, Խաչատուր Աբովեանն ըստեղծել է մեզ համար այդ Աղասուն և նրա մէջ ամփոփել է իւր ժամանակի սուրբ զգացումները, և ձգտումները և ընտիր մտքերը:

Հաւատացէք, Աղասու ազնիւ, քաջ դէմքն աւելի մեծ օգուտ է տուել և կըտայ մատաղ սերընդին, կօգնէ ընկած հոգիների փրկութեան գործին, քան այն ամեն անճոռնի դէմքերը, որոնք յանուն ճշմարտութեան հրապարակի վրայ են դրուել:

Եթէ մեր կեանքն ընկած է և ազնիւ ու օրինակելի դէմքեր չեն սնուցանում մեծանում, պէտք է գոնէ ստեղծել յօրինել, այդպիսի դէմքեր:

Անմիտ գովասանքից, տղայական փառաբանութիւնից, ինչպէս և անհաշիւ յարձակումներից որքան մեզ հեռու պահենք, այնքան աւելի օգտակար կերպով ծառայած կըլինէինք գործին:

ՎՐԻՊԱԿ.—«Նոր-Դար»-ի նախընթաց № 192-րդ համարի առաջնորդողում մի սխալ է սպրդել. երրորդ սիւնակի վերջերում լոյս է տեսել «...մոռանում են այն դասակարգի, հաստատութեան, ինչպէս հոգևորականութեան, եկեղեցու, ազգի շահերը, բարոյականութիւնը», պէտք է կարդալ. «...մոռանում են այն դասակարգի...բարօրութիւնը»:

ՔՐՈՆԻԿՈՆ

Երևանի երկաթուղու բացման օրը, դեկտեմբերի 13-ին, Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխ. Գ. Ս. Գոլիցինը Երևանում վագոնի մէջ մի պատգամաւորութիւն է ընդունել Վեհափառ Կաթողիկոսի կողմից: Պատգամաւորութեան անդամներն եղել են՝ Սուքիաս արքեպիսկոպոս, Յուսիկ եպիսկոպոս և Բագրատ վարդ. Թաւաքալեան

— Մտադրութիւն կայ Երևանի երկաթուղու գիծը Ուլուխանլու կայարանից շարունակելու մինչև պարսից սահմանը:

— Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխ. Գ. Ս. Գոլիցինը 100 ր. է նուիրել Ղարաքիլիսայի ռուսաց եկեղեցու շինութիւնը վերջացնելու համար:

— Կ. Պոլսի հայ թերթերը հաղորդում են, թէ Մանչեստրում ապրող յայտնի վաճառական Մարտիրոս Թոքատեան 20 հազար ոսկի (172,000 ր.) է յատկացրել Գերմանիայում կամ Անգլիայում մի ռէալական դպրոց հիմնելու հայ տղաների համար:

— Պ. Ա. Մանթաշեանի ծախքով Պարիզում կառուցուելիք հայոց եկեղեցու շինութիւնը պիտի սկսուի առաջիկայ գարնանը և հետևեալ 1903 թուականին արդէն պատրաստ պիտի լինի:

— Այսօր, դեկտեմբ. 16-ին, օրուայ ժամը 12-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում նշանակուած է կովկասեան մամուլի, տպարանների և այլ նման հաստատութեանց ներկայացուցիչների ընդհանուր ժողով քննելու համար «Կովկասի տպագրական գործի աշխատաւորների փոխադարձ օգնութեան ընկերութեան» կանոնադրութեան ծրագիրը:

— Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն Թիֆլիսի նահանգապետին տեղեկագրել է, որ քաղաքային արհեստագիտական դպրոցում կրթական և կարգապահութեան գործը խիստ անբաւարար է, և խնդրում է նրան առաջարկել քաղաքային վարչութեանը, որ սա միջոցներ ձեռք առնի այդ բանի դէմ:

— Արտասահմանի հայ պարբերական թերթերի թիւը մէկով ևս աւելանում է. առաջիկայ տարուայ յունուարից Կահիրէում (Եգիպտոս) պիտի հրատարակուի «Արտէմիս» անունով ընտանեկան և գրական մի ամսահանդէս օր. Մառի Պէյլէրեանի խմբագրութեամբ, որն և հիմնադիրն է նոյն հանդիսի: «Արտէմիս»-ը լինելու է քսաներորդ դարի հայ կանանց օրգան և տպագրելու է առաւելապէս հայ կանանց գրչի արդիւնքներ:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԹԱՒՐԻԶԻՑ.—Դեկ. 1-ին, ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների տօնին, Ղալայի ս. Աստուածածին եկեղեցում պատարագ կար, իսկ երեկոյեան «Արամեան» դպրոցում աշակերտական հանդէս և ներկայացում, որոնք անցան բաւական յաջող: Շնորհակալութեան արժանի է տեսուչ պ. Ալէքսանեանը, որի տեսչութեան օրից սկսած՝ հանդիսաւոր կերպով ամենայն տարի տօնում է Հայաստանի առաջին լուսաւորիչների տօնը:

— Դեկ. 2-ին «Արամեան» դպրոցի թատերասրահում լսարանական ընկերութիւնը մի քանի ճառախօսների միջոցով ծանօթացրեց հասարակութեանը հայր Ալիշանի գրական գործունէութեան հետ: Ճառախօսներից մէկը յայտնեց, թէ ինքը տեսել է հայր Ալիշանին և զանազան խնդիրների մասին խօսել հետը. Ալիշանն ասել է, որ քաղաքական խնդիրներում Վենետիկի ուխտը հաշտ աչքով չէ նայում հայերի վրայ և թէ այդ միաբանութեան ցանկութիւնը չէ, որ թրքահայերն ինքնավարութիւն ստանան. թող հայերը ոչինչ չսպասեն Մխիթարեան միաբանութիւնից: Այսինքը հայերը որքան թշուառ լինեն, այնքան ձեռնտու է այդ ուխտին:

Հրաւիրում ենք առանձնապէս հեռաւոր երկրներում «Նոր-Դար» ստացողներին՝ ժամանակին բաժանորդ գրուելու, եթէ կամենում են առաջիկայ 1902 թ. յունուարի 1-ից անընդհատ ստանալ «Նոր-Դար»-ը:

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՆՔԻ ԱՒԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի վանքի աւագ եկեղեցու վերանորոգումն սկսուեց 1894 թ., թեմիս նախկին առաջնորդ գեր. Գէորգ արքեպ. Սուրէնեանցի նախաձեռնութեամբ, և վերջացաւ ու տաճարն օծուեց սոյն դեկտ. 9-ին: Այսպէս ուրեմն ութն ամբողջ տարի տևեց այդ վերանորոգումը, որպիսի ժամանակամիջոցում կարելի էր երկու երեք նոր եկեղեցի կառուցանել: Գուցէ առարկուի, թէ վերանորոգումն այսքան երկար տևեց նրա համար, որ տաճարի արտաքին վերանորոգութիւնը ժողովարարութեամբ գլուխ բերուեց. բայց ինչ պիտի առարկեն ներքին նորոգման համար, որ այնքան ծանր ու բարակ էր առաջ գնում. դրա համար էլ հօ ժողովարարութեան չէին ձեռնարկել. փողը պատրաստ էր. էլ ինչո՞ւ այդքան տարի երկարացաւ վերանորոգման գործը: Սակայն թողնենք այս նկատողութիւնները և սկսենք նորոգման մասին խօսել:

Անցեալներում մենք «Նոր-Դար»-ի միջոցով, նոյն վանքի արտաքին վերանորոգման մասին խօսելիս, ասել ենք, որ ներքին վերանորոգումը մի մեծ փոփոխութեան չի ենթարկել տաճարը: Եւ ճիշտ էլ այդպէս եղաւ՝—տաճարն էլի իւր մեծ ու անտանելի սիւներն ունի, նոյն ծուռ կամարները մնացել են անփոփոխ, եկեղեցին դարձեալ փոսն է ընկած և այլն. մինչդեռ այդ պակասութիւնները, եթէ ոչ ամբողջովին, գէթ մասամբ կարելի էր ուղղել. օրինակ՝ կարելի (և անհրաժեշտ) էր գաւիթը գոնէ մի չորս վերշոկով ցածրացնել՝ եթէ չէր կարելի տաճարի յատակը բարձրացնել. այդպիսով վերացուած կըլինէր մի գըլխաւոր անյարմարութիւն, որ զգում է մարդ տաճարը մտնելիս և որը կայանում է այն բանում, որ գաւթից տաճար մտնելիս նախ իջնում ես մի աստիճանով և ապա մօտ երկու վերշոկ բարձրանում ես: Բացի այդ՝ կարող է պատահել, որ մեծ հեղեղների ժամանակ անձրևի ջուրն ուղղակի ներս խուժի տաճարը: Մեծ սիւների մէջտեղ կանգնելիս և դէպի սեղանը նայելիս անմիջապէս աչքի է ընկնում կամարի գօտիների ծռութիւնը՝—կամարի աջ կողմը 6—7 վերշոկի չափ հաստ է, իսկ ձախ կողմը 2—3 վերշոկի չափ բարակ. եթէ անհնար էր կամարի հաստ տեղը փոքր ինչ տաշել ու բարակացնել, հօ կարելի էր բարակ տեղը հաստացնել և այդպիսով համաչափութիւն պահպանել: Բացի այդ՝ կամարների գագաթնակէտը մի ուղղութեան վրայ չի կանգնած. ճարտարապետը պարտաւոր էր այդ թերութիւնը վերացնել: Պարսկական ոճով փայտեայ հին խաչկալներին փոխարինել են հայկական ոճով շինուած մարմարեայ նոր խաչկալներ, բայց այդ բանումն էլ փոփոխութիւնը կատարեալ չէ. աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ վէմ քարը քիչ ներս լինէր, որպէսզի պատարագիչ քահանան խաչկալից դուրս չլինէր կանգնած: Վերանորոգուած տաճարը նախկինի հետ երբէք չի կարող մրցել գաջեայ զարդարանքների (орнаментацiи) կողմից, որովհետև այժմեան տաճարում գրեթէ բոլորովին բացակայում են այդպիսի զարդարանքներ, եթէ չհաշուենք սիւների անկիւններում և կամարների գօտիների վերջաւորութեան վրայ գտնուած աղքատ զարդերը. այդպիսի զարդերի փոխարէն՝ կան հիւսուած հասարակ նկարներ, որոնց մեծ մասը ոչ հայկական, այլ խառն և մեծ մասամբ յունական-բիւզանդական ոճով են շինուած: Զարդարանքների շարքին աչք ծակելու չափ բազմաթիւ են մանաւանդ ոսկեզօծ խաչերը: Պատուհանների շուրջը գտնուած նկարներն անաջող են. նոյնպէս անաջող ու կոպիտ են դռների շուրջը գտնուածները: Պիտի նկատել, որ առհասարակ նկարների ներկերը (տոն) շատ անաջող են վերցրուած:

Նախկին տաճարում սիւների վրայ պատկերների համար գաջից շրջանակներ էին շինուած և գեղեցիկ կերպով զարդարուած էին այդ շրջանակները. այժմ պատկերներն առանձին ոսկեզօծ շրջանակների (բագետների) մէջ են առնուած և կախուած են սիւների վրայ, բայց այդ պատկերներն այնքան մեծ են բաղդատմամբ սիւների վրայ գտնուող նկարուած շրջանակների, որ այդ նկարուած շրջանակներն ուղղակի ծածկւում ու կորչում են պատկերների ետին: Նկարիչը, կարծէք, բնաւ չի մտածել պատկերների չափը յարմարեցնել սիւների վրայ գտնուող նկարուն շրջանակներին: Դրա փոխարէն տաճարում կան և փոքրիկ պատկերներ՝ մեծ տարածութեանց վրայ զետեղուած: Այդպէս, օրինակ, դուք կը տեսնէք, թէ ինչպէս անճաշակ կերպով է զետեղուած տաճարի հիւսիսային դրան գլխին գտնուող պատկերը:

Գալով պատկերների մասին, պիտի ասենք որ բացի խաչկալների վրայ զետեղուած պատկերներից՝ Տիրամօր, Քրիստոսի, Տրդատի մկրտութեան և աւագ բեմի աջ կողմը զետեղուած Յայտնութեան նկարներից, որոնք համեմատաբար աջողակ են (թէև սա էլ պիտի նկատել, որ այդ պատկերները պատճէններ են ուրիշ նկարների),—մնացած բոլոր նկարներն էլ անաջող են և տեխնիկայի կողմից թոյլ. օրինակ՝ Համբարձման պատկերի մէջ Քրիստոսի ոտները կարճ են. հրեշտակների դիմանկարները թէև գեղեցկութիւն են արտայայտում, բայց մարդ չի սրամտում այդ գեղեցկութեան մէջ գտնելու և անմեղութիւն, սրբութիւն ու բարութիւն. այնպէս որ այդ նկարների՝ հրեշտակների պատկերներ եղած լինելը միմիայն թևերից ես իմանում: Նոյնպէս պիտի նկատել, որ Յովհաննէս-Մկրտիչ Քրիստոսին մկրտելիս չէր կարող ձեռքի ցուպի գլխին խաչ ունենալ, ուստի հարկաւոր է այդ նկարի մէջ ջնջել խաչը:

Եկեղեցին նորոգելիս՝ կանանց դասը,

պոչը և թաթերը մեզ չունին. ամեն բան թոքերումն է:

Նա վեր կացաւ մի դեղատոմս գրեց և պատուիրեց, թէ ինչպէս պէտք է գործադրել դեղերը: Ես վախեցայ փող տալ, միտս բերելով Գայլի օրինակը, այդ պատճառով բարուք համարեցի քսակս դնել նրա առաջ, թողնելով որ որքան ուզում է՝ թող ինքը իւր ձեռքով վերցնի: Նա սուս ու փուս առաւ քսակը, ջիբը կոխեց, ասաց «ցտեսութիւն» ու գնաց: Բարեբաղդաբար պահեստի փող ունէի և մի կէս ժամից յետոյ բերեցի նոր դեղերը: Պատաղութեամբ վերցրի հին սրուակները և թափեցի փողոց: Բայց հէնց որ սկսեցի գործածել նոր դեղերը, Աղուէս բարեկամիս դրութիւնն աւելի վատթարացաւ: Այդ երևում էր նրանից, որ նա պահանջում էր իւր բոլոր բանաստեղծութիւնները տպագրել: Յուսահատուած ես վազեցի մի ուրիշ բժշկի մօտ և վճռեցի բժիշկների խորհուրդ հաւաքել: Այդ պատճառով դիմեցի բժշկապետ պ. Արջին:

—Երեկ արդէն բժիշկներ եղել են,—հարցրեց պ. Արջը:

—Այո:

—Ովքեր են եղել:

—Պ. պ. Գայլը և Վագրը:

—Ինչպէս...Գա՜յլը և Վա՜գրը, այդ կօշկակարնե՞րը... Օ՜, ես այժմ չեմ զարմանում, որ ձեր ընկերն այնպիսի դրութեան մէջ է, որ բանաստեղծութիւններ է սկսել շարադրել և պահանջում է տպագրել: Հաւատացնում եմ ձեզ, բարեկամ, դրանք խաբեբաներ են, հոգեհաններ են և ոչ թէ բժիշկներ:

—Ուրեմն խորհրդին դրանց հրաւիրել չի՞ կարելի:

—Դրա՞նց հրաւիրել: Դուք ուզում էք ինձ անպատուել: Եթէ ցանկանում էք, որ ես լինեմ, այն ժամանակ ես ձեզ կասեմ, թէ ում կարելի է հրաւիրել առանց երկիւղի:

Նա բերեց բոլոր բժիշկների ցուցակը, որոնց թիւը հասնում էր 345 հոգու, և վերցնելով մատիտը 15 տեղ նշան դրաւ:

—Ահա այս 15 հոգին են, որ կարելի է ասել, թէ բժիշկ են,—ասաց պ. Արջը:—Ի հարկէ հաւասարուել ինձ հետ չեն կարող, բայց, այնուամենայնիւ, նրանց բժիշկ համարել կարելի է: Քանի՞ հոգի էք ուզում որ լինեն:

—Չորս:

—Շատ բարի: Մէկը կըհրաւիրենք պ. Ուղտին, միւս...ը... միւսը պ. Ոչխարին... օ, ոչ, նա չի գալ Ուղտի հետ...Կըհրաւիրենք Կատուին, Գոմէշին, Այծին... ո՜չ, ո՜չ, ո՜չ. դրանք իրար միս են կըրծում: Հըմ... հա՜, միտս եկաւ. կըկանչենք Աւիծին: Երրորդը, երրորդը...

Այստեղ պ. բժիշկը խոր մտածման մէջ ընկաւ, և ես չէի իմանում, թէ ինչ էր փնթփնթում քթի տակին:

Միայն երկու ժամից յետոյ նա թաշկինակը հանեց և, սրբելով քրտինքը, մի թառանչ քաշեց ու ասաց.

—Վերջապէս գտայ այնպիսի չորս բժիշկ, որոնք միմեանց տեսնելիս սիրտները չի խառնի: Հաւատացնում եմ, որ այսպիսի ընտրութիւն անելուց դժուար բան չկայ: Ահա դրանց անունները. մէկը—ես, միւսը—պ. Ուղտը, երրորդը—պ. Աւիծը և չորրորդը—պ. Էշը: Թող վաղն առաւօտեան ժամը 9-ին բոլորը լինեն ձեզ մօտ: Դուք չգիտէք, թէ որքան դժուար է խորհուրդ կազմելը,—կրկնեց պ. Արջը:—Մէկը ջոկում ես քո բարեկամը, երրորդը ջոկելն արդէն դժուարանում ես, որովհետև պիտի համ քեզ ծանօթ լինի, համ երկրորդի հետ լաւ յարաբերութիւններ ունենայ. վերջապէս երրորդն էլ ես գտնում, իսկ չորրորդի գտնելը համարեա անհնարին է, որովհետև նա պէտք է լինի համ քեզ ծանօթ, համ էլ երկրորդին և երրորդի հետ էլ մտերիմ: Պատահում է, որ նրանցից մէկը չի կարողանում գալ, և նոյն տանջանքը նորից պիտի սկսել:

Ես շնորհակալութիւն յայտնեցի պ. Արջին իւր յանձն առած նեղութեան համար և իմանալով մնացած բժիշկների հասցէները, դուրս եկայ, որ մէկ-մէկ իմացում տամ վաղուայ համար:

Միւս օրը, նշանակած ժամին, բոլորն էլ հաւաքուել էին խորհրդի: Մէկ-մէկ նորից շըխկացրին, թըխկացրին: Բարեկամիս դրութիւնը յուսահատական էր:

—Ես կարծում եմ, որ հիւանդութիւնն սկսուել է պոչից,—յայտնեց իւր կարծիքը պ. Ուղտը:

—Ոչ, յարգելի կոլլեգ,—ասաց պ. Արջը,—ինձ թւում է, թէ պատճառը թոքերումն է:

—Բայց ես կարծում եմ, որ բանն աղիքներումն է,—ասաց պ. Աւիծը:

—Չէ՜, չէ՜,—գռաց պ. Էշը:—Հիպոկրատի արևովը երդւում եմ, որ բոլոր չարիքը միզապարկից է գոյացել:

Այստեղ բժիշկները մի այնպիսի վիճաբանութիւն սկսեցին, որ էլ ասել չեմ կարող: Յուսահատուելով, որ դրանք երբ և իցէ համաձայնութեան գան և, տեսնելով որ հիւանդի դրութիւնը րոպէ առ րոպէ վատանում է, ես հարկ համարեցի ընդմիջել:

—Յարգելի բժիշկներ, դուք ամենքդ էլ շատ լաւ էք հասկանում բանի էութիւնը, և շատ հասկանալի է, որ մէկը միւսին չի ուզում զիջել, ուստի ես առաջարկում եմ հիւանդի վնասուած տեղը հետևեալ կերպով որոշել:

Այդ ասելով ես վերցրի թուղթը և հիւանդ Աղուէսի—բարեկամիս պատկերը նկարեցի: Ապա կարմիր մատիտով կէտեր դրեցի այնտեղ, ուր հիւանդութիւնը բոյն էր դրել, բժիշկների կարծիքով, այսինքն պոչի, աղիքների, թոքերի ու միզապարկի վրայ, յետոյ բոլորը գծերով միացրի: Այդ բոլորի հանդիպման կէտը ես առաջարկեցի ընդունել իսկական հիւանդութեան կէտ, որը և ամենքը մեծ ուրախութեամբ ընդունեցին: Ապա գրեցին մի դեղատոմս, որի երկարութիւնը կէս արշին էր: Ես խնդրեցի բժիշկներին սպասել, որպէս զի անձամբ տեսնեն դեղի ներգործութիւնը: Գլխարկս առնելով վազեցի դեղատուն: Կէս ժամից յետոյ առաջին սրուակը բերի (դրանց բոլորի թիւը քսան էր): Այդ սրուակից պիտի երեք գդալ խմացնէի: Առաջին գդալը խմելուց յետոյ բարեկամս աւելի արագ սկսեց բանաստեղծութիւններ գլգլալ, երկրորդ գդալի վրայ տեսնեմ արդէն պոէմներ է սկսել: Յուսահատութեանս սահման չկար, բայց ինչ արած տուի երրորդ գդալն էլ: Այստեղ յանկարծ մի այնպիսի դէպք պատահեց, որի նմանը տեսած չէի կեանքումս: Հիւանդ բարեկամս տեղից վեր թռաւ գժի պէս, աթոռը վերցրեց և սուր թէ կըտաս—սրա գլխին, նրա գլխին: Բժիշկները գլխապատառ դուրս փախան: Երբ աթոռը բոլորովին ջարդուեց, հիւանդը հանգստացաւ և սիրտը թափեց: Ապա տաքութիւնը նստեց, և նա աչքերը բաց արաւ: Ես ուրախացած վրայ ընկայ:

—Օ՜, սիրելիս, ինձ սրտամաշ արիր,—ասացի:

—Ի՞նչ կայ, ինչ է պատահել,—զարմացած հարցրեց Աղուէսը:

—Օ՜, ես յետոյ կըպատմեմ, այժմ հանգստացիր,—հազիւ պատասխանեցի ես, ուրախութեան արցունքներս սրբելով:

Դժոխքն ուղարկելով բոլոր բժիշկներին, թէյ խմացրի բարեկամիս և, հետևելով Աղուէսուհու խորհուրդներին, մի երկու օրում ոտի կանգնեցրի անմահ ընկերոջս:

Մի շաբաթ անցաւ ընկերոջս հիւանդութիւնից յետոյ, և մենք արդէն մտածում էինք շարունակել մեր այցելութիւնները ու զուարճութիւնները, երբ առիթն ինքն ըստ ինքեան հանդիպեցաւ:

Կոմս Դէլլա Ջէյրանիերի

Նա մանաւանդ վերնատունը պէտք էր չինել այնպիսի նիւթից, որ հրդեհի ճարակ չկարողանար դառնալ: Ճիշտ է, թէպէտև վերնատան սանդուղները երկաթից են շինուած, բայց ամրացրած են փայտեայ յատակի վրայ, այնպէս որ, եթէ վերջինս այրուի, սանդուղը, վերնատնով միասին, կարող է փուլ գալ:

Նկատելի է նոյնպէս և այն, որ տաճարի պատուհանները, փոքր են. հարկաւոր էր կէս արշինաչափ մեծ բանել այդ պատուհանները մանաւանդ դասերի կողմն եղած պատուհանները: Օդանցքներ չկան. թէև պատուհաններում թողնուած են մի 4—5 վերշոկի չափ ծակեր, բայց այդ ծակերը շատ քիչ են: Այդ բանը նկատելի եղաւ հէնց տաճարի օծման օրը, երբ խուռն բազմութիւն էր հաւաքուած տաճարում: Մի ուրիշ թերութիւն էլ եթէ կայ, այդ այն է, որ եկեղեցին վառարան չունի. անհրաժեշտ է գոնէ մի չորս հատ օդափոխիչ վառարաններ (вентиляціонные камины) կանգնեցնել եկեղեցում ապա թէ ոչ ձմրան ցուրտ օրերին, երբ մանաւանդ բազմութիւն չի լինում եկեղեցում, ուղղակի չի կարելի կանգնած մնալ տաճարում:

Ձախ կողմի առաջին սիւնին կից կանգնեցրած է առաջնորդանիստ աթոռը, որը թէպէտև հայկական ճաշակով է շինուած, բայց կոպիտ է, ճնշուած ու անհամաչափ: Հարկաւոր էր 6—8 վերշոկ բարձրացնել այդ աթոռն հովանաւորող տանիքը և նրա սիւներն էլ բարակացնել:

Չնայելով որ այդ վերանորոգման համար ծախսուեց մօտ 80,000 ը., բայց պիտի նկատել, որ առհասարակ տաճարի վերանորոգումն էլի հիմնովին չէ, միայն արտաքին կողմն է գեղեցկացրած զանազան գոյնի ներկերով, որոնք, երբ եկեղեցում հասարակութիւնը բազմաթիւ լինի ու գոլոշի բարձրանայ (ինչպէս նկատուեց օծման օրը, երբ կամարներից ուղղակի գոլոշու կաթիլներ էին թափւում), կը փչանան շուտով: Ցաւալի է, որ այդչափ փող ծախսելուց յետոյ նորոգումը հիմնովին չի եղած և այդպիսով դարձեալ միջոց չի տրուած Թիֆլիսի հայերին՝ պարծենալու իրենց այդ միակ եկեղեցով: Վերանորոգման վրայ ծախսուած յիշեալ մօտ 80,000 ր. գումարից գրեթէ 45,000-ը Թիֆլիսի հայ հասարակութիւնն է տուել, իսկ մնացած մօտ 35,000 ը, որ բացառապէս տաճարի ներքին վերանորոգութեան վրայ ծախսուեց,—պ. Ա. Մանթաշեանցն է նուիրել:

XXII

Թիֆլիս, 10 դեկտ.

ՎԵՆԵՏԻԿԸ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԸ *)

(Ժամանակակից խոհեր)

VIII

«Այժմուս Մխիթարեանց սահմանադրութիւնն ալ ճիզուիթներուն սահմանադրութեան գրեթէ բառական թարգմանութիւնն է, հարկաւ պիտի գտնուին մէջներնին անոր կանոնները ճիշտ պահողներ, որ ըսել է հայ ճիզուիթներ: Եւ մենք այնպիսի անձինք տեսեր ենք դժբախտութեամբ վանքին մէջ որ ո՛չ միայն վարուք ճիզուիթ էին, այլ ճիզուիթ ըսուիլը իրենց մեծ պարծանք կըհամարէին:

«Մխիթարեանք ի հարկէ չէին կարող անտարբեր աչքով նայել այն վարժարանին վրայ (Պարիզի «Հայկազեան վարժարանի»), որ իրենց ձեռքը մնացած Մուրատեան վարժարանին սպառ-սպուռ քանդումն կըսպառնար: Նրանք իրենց վախը դիւրաւ հաղորդեցին Փարիզու քանի մի մոլեռանդ եկեղեցականներուն հասկացնելով նոցա թէ կաթոլիկութեան վնասակար է Փարիզու մէջ Հայկազեան հերձուածող վարժարանի մը բացուիլը..»:

Գ. արքեպիս. Այվազովսկի

«Մենք կատարելապէս իրաւունք ունինք շատ բան պահանջելու Մխիթարեաններից այն պարզ հիման վրայ թէ «որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ»: Ազգի մտաւոր և բարոյական վերածնութեան համար աշխատելու գեղեցիկ կոչումն ընտրելով և այս նպատակի համար ուրիշ ամեն ընկերութիւնից աւելի յարմարութիւն ու միջոց ունենալով, Մխիթարեան հայրերը չկամեցան կամ չկարողացան գիտութեան խորը թափանցել, այլ թեթև աշխատութեամբ ուզեցին ազգի լուսաւորիչների պարծանքը վայելել... Բագրատունիները, Հիւրմիզները հայոց Պառնասի վրայ նստած՝ նախնական դիւցազների և յաւերժահարսների հետ էին խօսակցում և արժանի չէին համարում այն մառախլապատ բարձրութիւնից իջնել մահկանացուների աշխարհը, ուր տառապալից ժողովրդի աղաղակները կարող էին տաղտկացնել նոցա ականջները...»:

Ստեփան Պալասանեան

«...Ի հնումն կամ ի նորումս, եթէ որևիցէ հայ թողած է իւր եկեղեցին և յայլ եկեղեցի դիմած, նա կա՛մ ճանաչած չէ լիովին իւր մայրենի եկեղեցին, կա՛մ հրապուրուած է աշխարհային տեսակէտով, կա՛մ բռնաբարուած է, և կամ թէ կրօնն ու կրօնափոխութիւն իրեն համար կարեւորութիւն ունեցած չեն, հետեւապէս նա բաժանուած է միայն և ո՛չ երբէք միացած: Բաժանուած է իւր ազգակիցներէն և արիւնակիցներէն, բաժանուած է իւր առաքելական եկեղեցւոյ անունէն, փառքէն, պարծանքէն, վշտէն, խնդութենէն, բայց թէ բաժանուելով ինչ բանի միացած է չգիտենք քանզի Քրիստոս բաժանեալ չէ... (Լինելոց է այն օրը) որ Հայաստանեայց եկեղեցիէն բաժանուածները վերստին դառնան իրենց բազմաչարչար Մօր գիրկն որ անհուն և խանդակաթ սիրով միշտ գրկաբաց կըսպասէ իւր զաւակաց վերադարձին...»:

Մելքիսեդէկ արք. Մուրատեան

«Թէպէտ նոյն վիճակի թարթափին և հայք, որք ըստ հոգևորին ընդ իշխանութեամբ են հայ-կաթոլիկ արքեպիսկոպոսին Իլվօվայ (Նիկոլ Թորոսովիչ), որոց թէպէտ և ի հայ լեզու պաշտեն արարողութիւնք եկեղեցւոյ ձեռագիր մատենիւք, բայց թիւրեալ յեղյեղեան մատեանք առ Նիկոլիւ... Եւ այսպէս վատթարեալ կորան Հայկազունք Լեհաստանի տատանեալքն երբեմն ի մեծութիւնս, յուսմունս, ի սէր հայրենի եկեղեցւոյն և ազգիս և ի նորոյ ակն յանդիման ցուցին զճշմարտութիւն վաղեմի թէ ըստ քաղաքական և պատմական բերմանց և հանգամանաց ազգիս՝ արտաքոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ չիք հայութիւն»:

Կարապետ Եզեան

«Թէպէտ իմ ուղեցոյց երկու Մխիթարեանք ասացին թէ իրանց ուսումնարանի («Մուրատ Ռափայէլեան») աշակերտները ոչինչ պարտաւորութիւն չունին իրանց վրայ, բայց անհերքելի է, որ նոքա պարտաւոր են արծարծել հայոց մէջ կաթոլիկ կրօնը ուր որ երթան ..»:

Վահան վ. Բաստամեան

«... Այս պատճառով և նոցա «Մատենագրութիւնք նախնեաց» հրատարակութիւնների յառաջաբան և ծանօթաբան տեղերը լցուած են Հռոմայ քահանայապետի արտօնութիւններով, որ ուղիղն ասեմ, մեր օրերում այլ ես կարող չէ առողջ բանականութեան առարկայ դառնալ...»

Սմբատ Շահազիզ

«Այս ժամանակ և մենք հայոց աշխարհիս որդիքս աչքներս բաց արինք, խելաբերեցանք և իմացանք, թէ մեր լուսանորոգ Մխիթարեանց մեզ քարոզած և ուսուցած ազգային դաստիարակութիւնը և բարոյական լուսաւորութիւնն ուրիշ բան չէ եղել, այլ պապականութիւն ամենայն մասամբ, մի կեղծաւոր հայրենասիրութիւն, փառաւոր, լուսաւոր, շլացուցիչ և հրապուրիչ ծածկութով թագցրած:

«Արդ՝ ցուցակենք միանգամ, թէ ինչ կորուստ և թէ օգուտ ունեցանք այս պապականաց մեզ խոստացած լուսաւորութիւնից, և քննենք, թէ արդեօք մեր կորուստն է մեծ եղել թէ օգուտը: Թէ որ Ռուբինեանց իշխանութեան ժամանակից մինչև Դոմինիկեան Բարդօլօմէօ եպիսկոպոսը, մինչև Կղեմես Գալանոսը և Նիկոլ Թորոսովիչը և սոյն այս երկու ազգաւեր և կրօնակործան քարոզիչներից մինչև Մխիթար Սեբաստացին կամ Մխիթարեան անուանեալ հայ կրօնաւորները և մեր այս ազգայնութեան, բարոյականութեան և գրականութեան ինքնակոչ վերականգնիչներից և լուսանորոգիչներից մինչև Հասունեանք կամ Պոլէճեանք քաջ քննելու լինինք, զարհուրանք և արհաւիրք մեր խելքն ու միտքը կը պաշարեն... Իսկ Մխիթար Սեբաստացին աւելի մեծ փառասիրութեամբ և աւելի մեծ ճարտարամտութեամբ միտքը դնելով մի լուսանորոգ կամ երկրորդ Լուսաւորիչ հայոց անուանուիլ և պապի կարդինալաց ժողովոյն ձեռամբ սրբոց կարգը անցնել...

«Այժմ մի խնդիր է մնում մեզ լուծելու, թէ Մխիթարեանք օգո՞ւտ թէ վնաս տուին մեզ: Ըստ մեզ, ուշիմ ընթերցող, մի ձու տուին, մի ձի առան...: Վեր են կացել սրանք (Մխիթարեանք) մեր ազգը մեզ ծանօթացնելու, մեր պատմութիւնը մեզ սովորեցնելու, մեր կրօնը մեզ քարոզելու, մեր լեզուն մեզ ուսուցանելու. ո՞ւր, միայն գրոց մէջ. ինչ միջոցաւ, բանիւ և ոչ գործով. ի փառս որո՞յ, միմիայն պապի և ոչ Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայոց աշխարհի... Եւ Մխիթարեանք վերստին երդում տուին, թէ իրանք ամուր են պապականութեան մէջ իբրև ուղղափառ քրիստոնեայ և պատրաստ դատապարտելու Հայաստանեայց Եկեղեցին և մեզ նորա որդոց իբրև հերետիկոս և հերձուածող.. Եթէ մի հաշիւ անելու լինինք, ԺԴ. դարուց մինչև այսօր Հայոց աշխարհիս որդոց և իրանց սերնդոց թիւը, որոնք պապականութեան որս դառան (և կորսուեցին ու կորսուելու վրայ են), մինչև մի միլիոնի կը հասնի: Արդ, ուշիմ ընթերցող, Հռոմայ խաղաղարար, լուսածաւալ, սիրատարած պապի մեր գլխին հասցրած հարուածներու և Լենկթեմուրներու, Չահապաններու և Նադր Շահերու քաղաքաքանդ և ազգակործան հարուածներու մէջ ինչ տարբերութիւն էք տեսնում...:

Մարկոս Աղաբէկեան

«Վենետկի ս. Ղազարու վանքը ներկայումս նման է մի ընկած և մոլորուած մեծատոհմ երիտասարդի, որ մի կողմից պարծենում է իւր հարց մեծագործութիւններով, միւս կողմից անխնայ վատնում է տոհմական հարստութիւնը և իւր ձեռքով կործանում է հայրենական տունը: Վենետիկցիք անշուշտ գիտեն որ պապական իշխանութեան ծաւալումն իրենց նպատակ ընտրելով նոքա իրենց եզակի տեղից գահ են իջնում և կանգնում են կաթոլիկութեան այն բազմաթիւ կարգերի և ընկերութիւնների շարքում, որոնց մի օր պիտի հրաժարուի հիւրընկալել նաև ազատ Իտալիան: Մխիթարեանք անշուշտ գիտեն, որ հայ ազգըն այժմ լաւ ըմբռնած է նոցա հոգին և ուղղութիւնը, թէ օգտաւէտութիւնը, թէ վնասակարութիւնը: Մխիթարեանք թող գիտենան, որ տարէնը մի քանի գիրք հրատարակելով նոքա սրբած չեն լինիլ հայի արտասուքը, որի թափել տալու պատճառն էլ իրանք են դառնում:

«Եւ այսպէս ո՞ւր են գնում Մխիթարեան յարգելի հայրք... Ժամանակը չէ՞ արդեօք որ ս. Ղազարու վանքը թօթափէ իրենից օտարի քողը և հաստատ, ամուր քայլերով վերադառնայ այն ազգային շրջանին, որից դուրս խորհուրդ և յարատեւութիւն չունի նրա կեանքը ..

«Ո՜հ թէ այս բաղձալի վերակենդանութիւնը կատարուէր գեր. Հ. Իգնատիոս Գիւրեղեանի աբբայութեան օրով, աջակցութեամբ քաղցրանուագ Նահապետի և այլոց արժանաւորաց.. »

Աղէքսանդր Երիցեան

Լաւ, շատ լաւ ցանկութիւն է յարգելի հնագէտի ցանկութիւնը, բայց գա ցնորք չէ՞ արդեօք... Հ. Իգնատիոս Գիւրեղ բոլորովին այլ կերպ է մտածում: «Քաղցրանուագ Նահապետն» էլ գնաց անվերադառնալի աշխարհը և ս. Ղազար կղզին թողեց աւելի անհետաքրքրելի:

Իսկ մենք բաւական համարենք այսքան անուանի մարդկանց կարծիքները.ով աւելի է ուզում, թող ինքը, բացի մեր թուած հեղինակներից, կարդայ և Օրմանեանի, Թէոդորեանի, Մ. Մամուրեանի, Էմինի, Պալդազարեանի և ուրիշ յայտնի հեղինակների գրուածքները և շա՜տ շա՜տ բան կը գտնի:

Գոշ

---

*) Տես «Նոր-Դար» № 192.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ, 8 դեկտեմբերի.— Ասում են՝ «շունը հաջելով գայլ կըբերէ» կարծես թէ արդարանալու վրայ է այդ առածը. այնքան խօսուեցաւ և գրուեցաւ մեր դպրանոցի համար եւ հոգևոր անձն տեսուչ նշանակելու կարևորութեան մասին, որ կարծես իրականանալու մօտ է դա: Գոնէ իբրև հաստատ իրողութիւն խօսւում է, թէ տեղիս յաջորդը Վեհափառից կոնդակ է ստացել այդ մասին: Թէպէտ մենք չենք հաւատում դրան, բայց կըզարմանանք, եթէ արդարև յաջորդը մի այդպիսի կոնդակ ստացել է և լուռ է մնում՝ նա իրաւունք չունի այդ կերպ վարուելու, թէ կուզ հէնց այն նկատմամբ, թէ ուսումնարանական տարուայ կէսն է...: Սակայն ինչպէս նկատեցինք, մենք չենք հաւատում մի այդպիսի բանի. մեր հոգևոր իշխանութիւնը խելքի է գալիս միայն այն ժամանակ, երբ արդէն մազերը փետրելու ժամն է հասնում...: Բայց ափսոս: Գրեցինք, բողոքեցինք մեր եկեղեցական հոգաբարձութեան գործերի մասին—ոչ ոք չլսեց. մեր հոգևոր իշխանութիւնը չլսելու ու չտեսնելու էր տալիս: Եւ մեր աղքատների կոպէկների կորուստը—կորուստ էլ մնաց: Մենք ահա 10—15 տարի է բողոքում ենք, ցոյց տալիս հոգևոր դպրանոցի պակասութիւնները—և լսող չկայ: Հաւատանք, որ այժմ հոգևոր իշխանութիւնը լսած լինի ժողովրդի արդար և որոտալից բողոքները և . կարգադրութիւն արած: Երանի չէ՞ր, որ գոնէ այդքան հաւատ ունենայինք:

—

Փառք Աստուծոյ, շան ու ձիու վրայ էլ հարկ դրին. այժմ կը մնայ կատուների, թռչունների և այլ ամեն տեսակ կենդանիների վրայ էլ դնել հարկ: Քաղաքն աղքատ է, ընդամենը 20,000 դեսեատին պատուական հող ունի, բայց դրա եկամուտն անբաւական է. քաղաքը պարտքեր ունի, պէտք է վճարել. այժմ մեր քաղաքային ինքնավարութիւնը նոր գործեր պիտի անէ և... փող է պէտք:

Մեր քաղաքի ամեն մի 8—10 տուն մի գիշերապահ է պահում. քաղաքն է պահանջում տանտէրերից: Բայց գողութիւններ ու աւազակութիւններ դարձեալ անպակաս են: Անցեալները կողոպտեցին նոյն իսկ Ս. Թորոս եկեղեցին: Ժողովուրդն ապահով չէ, մանաւանդ հասարակ դասակարգը, որը բընակւում է քաղաքի ծայրերում և ստիպուած է շներ պահել իւր ապահովութեան համար: Այժմ երբ քաղաքային խորհուրդն ընդունել է շների վրայ տուրք դնելու խնդիրը, աղքատ ժողովուրդն ստիպուած պիտի լինի կամ շըները կոտորել և կամ հարկ տալ: Սրանով ժողովրդի դրութիւնը կը թեթևանայ—կատաղած շներ չեն լինիլ և մարդիկ կատաղելու վտանգից ազատ...: Միւս հարկը ձիերի վրայ է:

Բայց քաղաքային խորհուրդը մի բան է մոռացել միայն. նրան իրաւունք տըրուած է տուրք նշանակել շների և այլ կենդանիների վրայ միայն այն ժամանակ, երբ քաղաքն անակնկալ կերպով մեծ ծախսերի տակ է ընկնում, օրինակ, երբ խոլերայի կամ ժանտախտի պատճառով իւր սովորական եկամտի աղբիւրները քիչ են գալիս: Ի՞նչ պատահեց յանկարծ, որ հարկաւոր եղաւ մեր շներն անգամ հարկի ենթարկել. եթէ կատաղելուց են վախենում, թող պահանջեն ցանկակապ ունենալ և այլն:

—

Եկող տարուանից մեր քաղաքը հարստանալու է մէկ քանի ուսումնարաններով եւ —տեղիս աղջկանց գիմնազիոնին կից բացուելու են աղջկանց առևտրական միջնակարգ կուրսեր 80 հոգու համար: Դրա համար թոյլտուութիւն պիտի ստացուի ի հարկէ: Մեզ համար մութ է մնում այդ դպրոցի նպատակը. քաղաքս առևտրական ոչ մի նշանակութիւն չունի, առևտրական մեծ հաստատութիւններ չունի, իսկ եղածների համար մեր երիտասարդները շատ են ու քիչ չեն: Ըստ ամենայն հաւանականութեան, դրանից օգտուողները դարձեալ ռուսուհիք են լինելու...: Բացի դրանից բացուելու է նաև չորս քաղաքային դըպրոց: Այդ էլ՝ երկու հասարակ կուսակցութիւններ իրար «գլուխ» դնելով արին: Հետաքրքրականն այն է, որ ոչ մէկ կուսակցութիւնը չուզեց նախ իմանալ, եղած դպրոցները բաւակա՞ն են թէ ոչ, քանի՞ խնդրատու առանց բաւարարութեան է մնում և ինչ պատճառով: Եթէ հետաքրքրուէին, կը տեսնէին, որ քաղաքային դպրոցների մէջ կան այնպիսիները, որոնք տեղ ունին, բայց դասատուների թուի պակասութեան պատճառով կարող չեն աւելի աշակերտ կամ աշակերտուհի ընդունել. օրինակ Օլգինսկի վարժարանը...:

—

Մեր քաղաքային խորհրդի վերջին նիստում ի միջի այլոց յարուցեց նաև արհեստագիտական դպրոցի խնդիրը: Հոգաբարձուներից մէկը յայտնեց, թէ քաղաքն ահագին ծախս է անում այդ դպրոցի վրայ և... արդիւնք չկայ: Զարմանալի է այդ դպրոցի բաղդը: Մենք գիտենք, թէ ինչ տեսուչ էր հանգուցեալ բանաստեղծ Ռ. Պատկանեանը, որի համար այդ դպրոցի խնդիրը միայն ռոճկի խնդիր էր, գիտենք նաև նրա յաջորդի սխրագործութիւնները, որոնց պատճառով էլ արձակուեց իւր պաշտօնից: Նշանակուեց նոր տեսուչ պ. Ալթունճին և նրա հետ էլ նոր յոյսեր ծնեցան մեր մէջ, թէ վերջապէս դպրոցը փոքր ինչ կարգի կընկնի: Եւ արդարև, պ. Ալթունճու առաջին քայլերն արժանի էին քաջալերութեան. դպրոցից արձակուեցան մի քանի անպէտք վարպետներ, շէնքը վերանորոգուեցաւ, պարապմունքները կանոնաւորուեցան... բայց ամեն բան արտաքուստ, գոնէ այդպէս է երևում շատ նշաններից: Տեսուչն ուսումնարան գալիս է ժամը 11-ին և 12½-ին գնում, իսկ նա ունի 16 դաս շաբաթական, որից 12-ը ձրի, բայց այդ ձրիների համար էլ կանչել է, առանց մէկի գիտութեան և համաձայնութեան, մի տղայ և ձրի դասերը յանձնել նրան որոշ ռոճկով... դպրոցի հաշւով. ինքը Ռոստովում անում է նորոգութեան պատուէրներ և դպրոցի հաշւով անում է այլն: Գոնէ այսպիսի շատ բաներ են ասւում: Ցաւալի է, եթէ ուղիղ է: Ուրեմն ինչ է անում հոգաբարձութիւնը, որ միայն մեծ-մեծ խօսել գիտէ, ինչի՞ չի ստուգում հաշիւները, ինչի՞ տեսչին չի ստիպում, ըստ պայմանի, բնակութիւն ունենալ դպրոցում, ինչի՞ չի հետաքըրքրւում իմանալու, թէ տեսուչն ինչպէ՞ս է որ ձրի դասեր տալու համար հիւանդ է, իսկ փողով դասերի համար—առողջ, և վերջապէս քանի՞ դասի համար է փող ստանում, ինչ են անում արհեստանոցներում, ինչ գործի վրայ ո՞րքան ժամանակ կորցնում և ինչ ստանում...

Հրատու

ԿԱՐՆՈՅ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Կարին, 6/19 Նոյեմ.—Մինչև ցարդ շարժերը դադրած չըլլալով կըփութամ 26/8 երկրաշարժի ատեն տեղի ունեցած զոհերուն և վնասուց մանրամասնութիւնը ղրկել:

Հոկտ. 26/8 ուրբաթի երկրաշարժի ատեն փլատակաց ներքև մնացող զոհերուն վաւերական թիւն է 30, որոց երկուքն հայ, Աղաւնիկ Սըրսըրեան և իր երկամեայ տղեկը, աղքատ ընտանիքէ: Իսկ վիրաւորեալներուն թիւն է 50: Մինչև ցարդ շարժերը դադրած չըլլալով, ընդերկրեայ գոռումներով շարունակ թեթև կամ ծանր ցնցումներ կըզգացուին: Ցուրտերուն սաստիճանը հետզհետէ սաստկանալով, մառախլապատ օդ մը կըտիրէ. ահ ու սարսափի մատնուած վրանաբնակ ժողովուրդը, այլ ևս ուսահատ անտանելի կացութենէն, ինքինքը յանձնած է Աստուծոյ կամաց: Աւելի լաւ կըսեպէ իր խարխլեալ տան ողջ մնացած մէկ անկիւնը պատսպարուելով անդ մեռնիլ, քան սոսկալի ձմրան սաստիկ ցուրտերուն զոհ ըլլալ: Այլ ամենաթեթև ցնցում մ' իսկ զինք կըստիպէ տունէն դուրս նետուիլ: Ի մի բան, աննկարագրելի է աղքատիկ ժողովրդեան թշուառութիւնը: Նոյեմ. 5 երկուշաբթի գիշեր, մինչ այս տողերը կըգրէի, ժամ երկուքը քառորդ անցած արևմուտքէն արևելք ուղղութեամբ բաւական զօրաւոր ցնցում մը զգացուեցաւ, հինգ վայրկեան վերջ' դարձեալ: Նաև երեքին քառորդ մնացած: Իսկ ժամ երեքին կեդրոնական սոսկալի ցնցում մը զգացուեցաւ, որ բաւական երկար տևեց: Այս պահուս զգացած սարսափէս պարտաւորեցայ գրիչս վար թողլով, մնացեալն առաւօտ շարունակել: Ժամը վեցին ալ սաստիկ ցնցում մը զգացուեցաւ: Ժողովուրդն ամեն առաւօտ կանուխ ձեան վրայ ծունկ չոգած հակում կընէ: Ամեն օր կանոնաւորապէս ընդհանուր աղքատաց հաց, թէյ և շաքար կըբաշխուի, որոց 1,500-ն հայ, բայց չէ թէ սովորական մուրացիկներ, այլ գործէ դադրած և անպատսպար էսնաֆներ են: Բարեխնամ կուսակալ փաշան Նազըմ բէյ, հայրական հոգածութեամբ, միշտ կըհսկէ աղքատիկ ժողովրդեան վրայ: Շարունակ հետևոտն տաղաւարները կայցելէ: Հացագործներուն խստիւ պատուէրներ կուտայ, և շնորհս որոյ հացին օխան 30 փարայի կըծախուի, մինչ հացագործներն առիթէն օգտուելով կուզէին օխան մինչև 2 ղըշ-ի ծախել: Հրամայեց որ քաղաքապետական բժիշկը շարունակ վրաններն այցելելով հիւանդները խնամէ և երկրաչափն ևս թաղերն ու շուկաները շրջելով կիսաւեր և կասկածելի շէնքերը քանդէ: Ո՛չ նուազ գովեստի արժանի է տ. Զաւէն ծ. վրդ.-ի և աղքատաց խնամակալութեան և առաջնորդարանի գործակատարին գործունէութիւնը, որք այս պահուս գիշեր ցերեկ կաշխատին աղքատները խնամելու համար: Ցարդ դեռ խանութներն ու մաղազաները փակ են, և եթէ բանան ալ, շուտ մը կըփակեն: Վեհ. սուլթանին հրամանաւ նաև ընդհանուր զօրաց համար ընդ փայտէ տաղաւարներ կըպատրաստուին: Գալով նիւթական վնասին, մեծաքանակ է: Ժողովուրդը մինչև հիմա վրաններու մէջ կծկտած դեռ հանգիստ անկողին մտած չէ:

—

Կարնոյ երկրաշարժին վրայ առաջնորդ տ. Զաւէն ծ. վ.-էն ս. պատրիարք հօր եկած նամակը, ծանօթ պարագաները պատմելով, կըսէ նաև թէ ազգային եկեղեցին փակուած է, շէնքին ծանրապէս վնասուած ըլլալուն համար: Ազգային շէնքերուն կրած վնասն 8,000 ոսկիի չափ կըհաշուի: Առաջնորդն ինքն ալ տաղաւարի մը տակ հաստատած է իր բնակութիւնը: Գովելի գործունէութեամբ կաշխատին երեք յանձնաժողովները, որոց առաջինը, կուսակալ բէյին նախագահութեամբ, ընկերակցութեամբ առաջնորդներուն, նպաստ կըհաւաքէ, երկրորդը վրաններ և տաղաւարներ կըհայթայթէ, կուսակալի փոխանորդին նախագահութեամբ, և երրորդը հաց, թէյ և շաքար կը բաշխէ, Կարնոյ կրօնական պատուորին նախագահութեամբ: Ցառաջիկային ալ պիտի ձեռնարկուի վերաշինութեան խարխլած շէնքերուն, որք հետզհետէ վար կառնուին ապահովութեան համար, կամ ինքնին կըփլին, յաջորդական ցնցումներէն: Հոկտ. 26 ի առաջին ցնցումն այնքան բուռն եղած չըլլալով, ժողովուրդը ժամանակ ունեցած է տուներէն հեռանալու, որով կեանքի կորուստը մեծ եղած չէ: Առաջին ցնցման օրն հայ դեռատի կին մը իր փոքրիկ զաւկին հետ իր տան փլատակներուն տակը մնալով մեռաւ, բայց ուրիշ հայ մեռած չկայ մինչև նամակին թուականը:

(«Բիւզանդիոն»)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծապատիւ պարոն խմբագիր,

Ձեր պատուական թերթի №188-ում Բալախանուց գրուած նամակում տպուած էր, որ «Դեկտեմբերի 5-ին աճուրդի հանեցին «Ձղթայ» արհեստանոցը»:

Պատիւ ունենք խնդրելու տպագրել ի միամտութիւն «Ձղթայ» նաւթարդիւնաբերական ընկերութեան փայատէրերի, որ այն արհեստանոցը ոչ մի կապ չունի մեր ընկերութեան հետ:

Նախագահ „Ձղթայ“ նաւթարդիւնաբերական Ընկերութեան՝

Յ. Մելիք-Բախտամեան

Թիֆլիս, 15 դեկտ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ

Դեկտեմբերի 5 ին Բիրմինգհամի քաղաքային տան մէջ միտինգ էր նշանակուած, որտեղ ճառ պիտի խօսէր պատգամաւոր Լլօյդ Ջօրջ, որը յայտնի է իբրև բուէրների կողմնակից: «Հայրենասէրները» ժողովարանն էին հաւաքել իրենց մարդկանցից խիստ շատերին և, երբ ճառախօսն ամբիոն բարձրացաւ խօսելու, նրան ընդունեցին շուացներով ու բողոքի աղաղակներով: Այնուհետև «հայրենասէրները» փորձեցին յարձակուել ամբիոնի վրայ, բայց ներս մտած ոստիկանութիւնն արգելեց: Այն ժամանակ քաղաքային տան առաջ հաւաքուած ամբոխը, մի քանի հազար մարդ, ջարդեց տան բոլոր ապակիները: Լլօյդ-Ջօրջին դուրս բերին թաքուն, ոստիկանի շոր հագցրած, և այդպիսով նա կարողացաւ ազատուել կատաղի ամբոխի ձեռքից: Ամբոխը մի որոշում ընդունեց, որով վստահութիւն էր յայտնում կառավարութեանը և արհամարհանք—դէպի Լլօյդ-Ջօրջը՝ իբրև դաւաճանի, և համակրական մի հեռագիր ուղարկեց Չեմբըրլէնին: Չբաւականանալով սրանով, ցուցարարներն սկսեցին ջարդել քաղաքային տան դռները, բայց նրանց դէմ ուղարկուեց մօտ 500 ոստիկան: Սկսուեց մի տուրուդմփոց, որի ժամանակ 27 հոգի վիրաւորուեցին, և սրանցից մէկը շուտով մեռաւ հիւանդանոցում: Ձերբակալուեցին 30 հոգի: Քաղաքային տան դահլիճում ամբողջ յատակը ծածկուած էր քարերով ու փշրուած ապակիներով. աթոռներն ու ամբիոնները կոտրատուած էին:

—Իռլանդիայում իրերի դրութիւնն աւելի ու աւելի երկիւղալի է դառնում: Այս օրերս դատարանը երկու ամսուայ բանտարկութեան էր դատապարտել իռլանդացի պատգամաւոր Օ՝ Կիլլին արգելուած միտինգ գումարելու համար: Նրա հետ միասին դատապարտուած էին իռլանդական միութեան չորս անդամ: Այս բանն Իռլանդիայում խիստ դայրոյթ էր յարուցել անգլիական կառավարութեան դէմ: Դեկտեմբերի 5-ին Ջոն Ռեդմոնդի պատուին Դուբլինում սարքուած կերոնահանդէսի առթիւ իռլանդական կուսակցութեան պարագլուխը մի հանդգնալից ճառ արտասանեց Անգլիայի դէմ: Նա ասաց, ի միջի այլոց. «Իռլանդիայի մայրաքաղաքի փողոցներում տեղի ունեցած այս հսկայական թափօրը պէտք է ցոյց տայ Ուինդհամին և ամբողջ կառավարութեանը, որ Իռլանդիան վճռել է վարել ապստամբութեան կռիւն անգլիական տիրապետութեան դէմ»:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

Գերմանացի մի լրագրող հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում անգլիական բլոկհաուզների մասին, որ նա տեսել է իւր աչքով Օրանժի հասարակապետութեան մէջ: Բլոկհաուզներն արտաքուստ նմանում են սովորական տների: Պատերը դրսից ներկուած են բաց-կապոյտ գոյնով, շրջապատուած են պարտէզներով, որոնց մէջ խաղաղ զբօսնում են մի քանի երիտասարդ մարդիկ: Եթէ այդտեղ պահապան չլինի կանգնած հրացանն ուսին, ոչ ոքի մտքովն անգամ չի կարող անցնել, թէ դա պատերազմական բերդ է: Աւելի մօտիկից որ դիտում ես, տեսնում ես, որ այդ պարտէզներում վարդեր չեն բուսնում, բայց փշեր—ինչքան կամենաս: Ամբողջ բակում ձգուած են մետաղական փշածածկ ցանցեր: Բլոկհաուզները գտնւում են իրարից 60,000 քայլ հեռու, և մէկը միւսի հետ միացած է երկաթալար ցանկապատով: Այդ լարերին ամեն մի 50 քայլ հեռաւորութեան վրայ ամրացրած են ազդանշանի հրանօթներ, որոնք խիստ օրստագին պայթում են, հէնց որ մարդ լարին դիպչում է նոյն իսկ ամենաթեթև կերպով: Բլոկհաուզների գլխաւոր գիծը, սկսուելով Դէաարից, գնում է մինչև Նիւպորտ, որտեղ շուռ է գալիս դէպի հիւսիս և հասնում է Պրետորիա, յետոյ ուղղւում է դէպի արևելք, մտնում է Պորտ-Եղիսաբէթին, այստեղից թեքւում է դէպի հիւսիս-արևմուտք և կանգ է առնում Կվինստաունի մօտ: Մի ուրիշ գիծ Դէաարից գնում է մինչև Կիմբերլէյ, Կիմբերլէյից մինչև Բլումֆոնտայն, Կլերքդորպ, Ելանդսֆոնտայն և Լէդիսմիթ: Երրորդը—Պրետորիայից մինչև Կոմանիպորտ:

—«Daily Tel.»-ը «Կապի Դեհս» է անուանում բուէր զօրավար Կրոյցինգերին, որին անգլիացիներն այս օրերս վիրաւորեցին և գերի բռնեցին: Ցիրաւի, դա մի քաջ, աննկուն և խիստ ճարպիկ զօրավար էր, որը գլուխ էր անցած Կապի ապստամբներին: Ջինգոիստների մամուլը պահանջում է պատերազմական դատի ենթարկել նրան, մեղադրելով նրան, ի միջի այլոց, այն բանի համար, որ նա անգութ կերպով է եղել վարուելիս գերիների հետ և սպանելիս է եղել սևամորթներին:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պրետորիայից հեռագրում են, թէ անձնատուր եղած բուէրների մէջ աւելի ու աւելի սաստկանում է «national scouts» ի հետ միանալու շարժումը, որ պէտք է այդ միջոցով շուտով վերջ դրուի պատերազմին: Այդ զօրքերի գեղեցիկ ծառայութիւնն ի նկատի ունենալով, վերջին ժամանակս թոյլ է տրուած կազմակերպել երկու նոր զօրախումբ Տրանսվաալի արևելեան և հարաւային մասերի համար: Արդէն 200 հոգի են հաւաքուած մի բուէր զօրավարի հրամանատարութեան տակ, որին ընտրել են հէնց իրենք: Արդէն գոյութիւն ունեցող մի զօրախմբի հրամանատարը, Բեյլիսը, վերջերս իւր ձեռներէցութեամբ գիշերային արշաւանքի էր ելել և գերել էր բուէրների մի բանակ: Համիլտոնի աջող արշաւանքների ժամանակ ևս աջակցութիւն է ցոյց տուել բուէր զօրավար Գրոնիէ:

—Արգենտինի և Չիլիի հասարակապետութիւնների միջև եղած վէճի ներկայ դրութեան մասին Սանտ-Եագոյից հեռագրել են հաղորդում «Հաւասի գործակալութեանը» դեկտեմբերի 12-ից. «Ընդհատելով բանակցութիւնները, Չիլիի հասարակապետութիւնը նոր առաջարկներ էր արել. Արգենտինի հասարակապետութիւնը փոխել էր այդ պայմանները, և Չիլին դեկտեմբերի 12 ի երեկոյեան ստորագրեց այդ բանի վերաբերեալ դոկումենտները:

—Պաշտօնապէս հաղորդւում է, որ Ջոուն նշանակուած է ենթ-քարտուղար Հնդի տեղ:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՖԼՈՐԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՆԱ
ԲՐՈՆ-ՖՈՆ-ԲՐԵՆՆԵՐ

Ընդունում է առաւօտեան ժ. 9—2
երեկոյեան ժ. 4—7

ԹԻՖԼԻՍ, Միխայլովսկայա, № 71.
471) 50—27

! ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ !
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՈՍԿԵԲՈՐԱԿԻ ԾՈԹՐԻՆԻ
ՕՃԱՌ
ԴԵՂԱԳՈՐԾ
Գ. Ֆ. ԻՐԳԵՆՍԻ

Ոչնչացնում է մաղձերը, արևից այրուածքը, դեղին բծերը, խալընդները, բշտիկները և ազդում է աւելորդ քրտնելու դէմ առաջարկւում է որպէս արդուզարդի և նուշահոտ բարձր որակութեան օճառ:

Մի կտորի գինը 50 կ., ½ կտորին 30 կ. Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում:

Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ. Ֆ. Իրգենսի մօտ, Մոսկուայում:
(M.) № 192764 24—23

ЛУЧШІЙ
ЦВѢТОЧНЫЙ
О-ДЕ-КОЛОНЪ
№ 4711
РЕЙНСКІЕ БУКЕТЫ
ПРЕВОСХОДНЫЕ ПРОДОЛЖИТЕЛЬНЫЕ
И ДЕШЕВЫЕ ДУХИ ДЛЯ ПЛАТКОВЪ
ВСѢХЪ ЦВѢТОЧНЫХЪ
И МОДНЫХЪ ЗАПАХОВЪ
(M)№ 128415/26 12—

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այսու ծանուցանում է, որ իւր ատեանում դեկտ. 18-ին, օրուայ ժամ 12-ին նշանակուած է աճուրդ շինելու բետոնի կոյուղի 34,0 սաժէն երկարութեամբ 0,375×0,95 Վօզնեսենսկի փողոցում ութիւն ունեցող կոյուղուց դէպի Չվինղլսի փոքրիկ փողոցը, 720 րուբլու գումարով: Մասնակցել ցանկացողներն կարող են ծ նօթանալ պայմաններին Վարչութեան շինարարական բաժնում (817) ամեն մի օր' առ. ժամը 9-ից մինչև օրուայ ժամը 3-ը: 3-

ԴԼ ՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ

Ծախւում են գործածուած, նոր և բոլորովին դուրս կանգնա հնհկարասիք, տուն կահաւորելու իրեր, բրոնձ, սարք, ոսկի, թ կագին քարեր: Москва, Неглинный проѣздъ, пассажъ Солодов кова рядомъ съ Абрикосовымъ. Մոսկուա, Սոլոդովնիկովի պասա մուտքը Նեգլինից:
(M.) 8514 23—18

ОТКРЫТА ПОДПИСКА
НА 1902 Г.
НА ЕЖЕДНЕВНУЮ ПОЛИТИЧЕСКУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ
„Аргонавтъ“

Два раза въ недѣлю номера „Аргонавта“ выходитъ съ **иллюстраціями.**

Подписная цѣна: съ пересылкой· достовкой годъ 7 р. 6 мѣс. **4 р.** Тифлисѣ **5 р** и 6 мѣс. **3 р.**

Годовые подписчики БЕЗПЛАТНО получать въ видѣ приложенія с бра сочиненія Н. В ГОГОЛЯ въ 3-хъ т со множествомъ **иллюстраціи**, издан «Народная польза» которое выидетъ въ свѣтъ въ Петербургѣ 21 февра 1902 г. и будетъ выданъ тифлисскимъ и бакинскимъ подписчикамъ въ пе **вой половинѣ марта 1902 г.** а остальнымъ подписчикамъ Закавказья высла **почтой.**

Подписка **принимается** въ **Тифлисѣ** Головинскіи № 14 и въ отдѣле конторы Головин № 3 магазинъ С Марикянца въ **Баку** Горчаковскіи Тагіева въ магазинѣ Шрейбера

Редакціонная письма статьи и сообщенія просятъ адрессаатьна **Ивана Григорьевича Хачатурова.** (819) 10—1

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՅԻ
(INJECTION AU MATICO)



Գրիմո և ընկ. դեղագործների թոյլ է տրուած Ռուսիայում հեղուկի մէջ շահագործուած են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս,որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյից (սերմնաթափութիւն) և մի քանի տարուայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել: Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմաթափութիւնները:

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում:

(M) 200345 43—21

Доз цензурою Тифлисъ, 1901 декабрь 15-го дня
Տպարան Ա. Ի. Պետրովի
Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387